600.0753.26.12.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2018 թվականի №753Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի № 414Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը, 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի հուլիսի 10-ի №365Ն որոշմամբ հաստատված կարգը և հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի նոյեմբերի 26-ի №83-18 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագրի ճշգրտումներին ու 2016-2020 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 4-ի №102Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №414Ա՝

1) որոշման №№1-6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար №№1-6 հավելվածների,

2) որոշումը լրացնել №8 հավելվածով՝ համաձայն №8 հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի դեկտեմբերի 14-ի №113-18 գրությամբ՝ 2018 թվականի առաջին 11 ամիսների ընթացքում փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվությունով ներկայացված ներդրումները, հաշվի առնելով նախորդ տարիների ընթացքում կատարված ներդրումների մասով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի վերլուծության արդյունքները, 2019 թվականի սակագնային մարժայի շահույթի և մաշվածության բազաներում կներառվեն 20 տոկոս նվազեցված ծավալով,

2) 2019 թվականի սակագնային մարժայով փոխհատուցվող՝ 2018 թվականին շահագործման հանձնված ներդրումների ամբողջ՝ այդ թվում սույն կետի 1-ին ենթակետի համաձայն նվազեցված ծավալը, ենթակա է ճշգրտման տեխնիկական աուդիտի եզրակացության և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից իրականացվող վերլուծության արդյունքներով,

3) 2017 թվականի ընթացքում փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվությունով ներկայացված ներդրումների ծավալը կարող է ճշգրտվել տեխնիկական աուդիտի եզրակացության արդյունքներով,

4) սույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված ճշգրտման արդյունքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության շահույթի և մաշվածության բազայում ավելացվող կամ նվազեցվող ծավալները կինդեքսավորվեն,

5) սույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված տեխնիկական աուդիտը իրականացվելու է Հայաստանի Հանրապետության հանրային

ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից առաջադրված ծրագրով և ժամկետներում՝ համաձայն էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման №0092 լիցենզիայի պայմանների 43-րդ կետի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
26 դեկտեմբերի 2018 թ.